ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ
(1920 թ. նոյեմբեր -1921 թ. ապրիլ)

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ. Բ.

1920 թ. նոյեմբերի սկզբին թուրքերը, ներխուժելով Ալեքսանդրապոլ և այստեղ մնալով մինչև 1921 թ. ապրիլը, շարունակել են հայերի ցեղասպանությունը, որին անդրադարձել են մի շարք հայ հեղինակներ[1]: Ընդրանք, բոլորն էլ կատարելով զգալի աշխատանք, խուսափել են պատասխանել հետևյալ հարցին. թուրքերի տիրապետության շրջանում Ալեքսանդրապոլի գավառային կուսակցական կոմիտեի և հեղկոմի գործունեությունը որքանո՞վ է եղել նպատակահարմար: Փորձենք պատասխանել այդ հարցին:

Ակնհայտ է, որ 1918 թ. հոկտեմբերի 30-ին Անտանտի զորքերի հրամանատարության և սուլթանական կառավարության միջև Մուդրոսում կնքված զինադադարի 11-րդ հոդվածի հիման վրա Թուրքիան իր զորքերը հետ քաշեց Անդրկովկասից: Եվ չնայած դրան, բռնազավթված հայկական և վրացական հողերը քեմալականները դիտում էին որպես թուրքական տարածքներ: Թուրք դահիճները, հավատարիմ մնալով իրենց հայակործան քաղաքականությանը, փորձում էին արյան մեջ խեղդել անկախ Հայաստանի ստեղծմանը միտված ամեն մի շարժում: Ելնելով այդ ձգտումից՝ 1920 թ. հունվարին Ստամբուլում հրավիրված համաթուրքական խորհրդարանի հռչակած «Ազգային ուխտի» համաձայն, Բաթումի մարզը, Կարսի, Արդահանի, Հայաստանի և Վրաստանի մի քանի շրջաններ ընդգրկվում էին թուրքական նոր պետության մեջ: Եվ երբ 1920 թ. սեպտեմբերի վերջին սկսվեց հայ-թուրքական պատերազմը, օգտվելով դրանից՝ թուրքերը փորձում էին շարունակել այդ ծրագիրը: Մուստաֆա Քեմալը և նրա դահճախումբը, դիմելով խաբեության, Թուրքիան հռչակելով իբրև հեղափոխական և Խորհրդային Ռուսաստանի դաշնակից, օգտագործելով ամբոխավարության բոլոր ընդունելի և անընդունելի եղանակները, հայտարարում են, թե իրենց առաջխաղացումը պայմանավորված է Խորհրդային Ռուսաստանի շահերով:

Թուրքերը, հոկտեմբերի 30-ին մտնելով Կարս, շարժվում են առաջ և նոյեմբերի 6-ին մտնում Ալեքսանդրապոլ: Հայաստանի դաշնակցական կառավարության հույսը, թե Անտանտի իր դաշնակիցները օգնության կհասնեն, չարդարացվեց: Ակնհայտորեն, Անտանտը բախտի քմահաճույքին թողեց իր դաշնակցին: Հայաստանի կառավարությունը ստիպված էր

---

[1] **Զոհրաբյան Է. Ա.,** Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 1979, Սարգսյան Ե.Ղ., Քեմալականների 1920-1921 թթ. արշավանքն Անդրկովկաս և 1921 թ. մարտի 16-ի Մոսկովյան պայմանագիրը (Լրաբեր հասարակական գիտությունների, 1972, N 1), Ղազախեցյան Վ., Ալեքսանդրապոլի ազատագրումը թուրքական օկուպացիայից (1921 թ. ապրիլ) (Պատմություն, 2002, N 1), Ալեքսանյան Կ., Թուրքերի ցեղասպանության քաղաքական շարունակությունն Ալեքսանդրապոլի գավառում (Բանբեր Հայաստանի արխիվների, 2005, N 1) և այլն:

նոյեմբերի 3-ին դիմել Անկարայի կառավարությանը՝ զինադադար կնքելու[2]: Թուրքական կողմը պահանջում է զինաթափել հայկական բանակը և ամբողջ զենքը հանձնել Թուրքիային: Բացի այդ, հայկական զորքը պետք է հետ քաշվեր Արփաչայից դեպի արևելք: Նոյեմբերի 15-ին Հայաստանի կառավարությունը ստիպված էր ընդունել զինադադարի վերաբերյալ թուրքերի պայմանները: Եվ ահա թուրքերի հետ բանակցություններ վարելու համար Ալեքսանդր Խատիսյանի գլխավորած պատվիրակությունը, բաղկացած 16 հոգուց, Ալեքսանդրապոլ հասնելով նոյեմբերի 24-ի առավոտյան, անմիջապես այցելեց թուրքական պատվիրակության խորհրդական Քյազիմ Կարաբեքիր փաշային: Բանակցությունները սկսվեցին նոյեմբերի 25-ին և Հայաստանի պահանջով տեղի էին ունենում առանց Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության: Պատահական չէր, որ նոյեմբերի 20-ին դաշնակցական «Հառաջ» թերթը գրել է. «Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել պետական և ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է վարի ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»: Սա հայ ժողովրդի շահերի բացահայտ ոտնահարում էր:

Պատվիրակության անդամ Վ. Մինախորյանը իր համախոհ Ա. Խոնդկարյանին ուղարկած նամակում հաղորդել է, որ հայ պատվիրակությանը թուրքերն ընդունել են բերդում, որտեղ Ա. Խատիսյանը բարեկամությանը նվիրված ճառ է արտասանել՝ կոչ անելով արյունահեղությանը վերջ տալ[3]: Դեկտեմբերի 2-ին դաշնակցական պատվիրակությունը ստորագրում է Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագիրը, ըստ որի, Հայաստանի տարածքը շրջանակվում էր Երևանի և Սևանի լճի սահմաններում, Նախիջևանի և Շարուրի շրջանները ժամանակավորապես պետք է գտնվեին Թուրքիայի հովանավորության ներքո, Հայաստանը զրկվում էր բանակ ունենալու իրավունքից, վերացվում էր պարտադիր զինապարտությունը, Հայաստանի կառավարությունը պետք է հետ կանչեր իր դիվանագիտական ներկայացուցիչներին արտասահմանյան երկրներից, հրաժարվեր Սևրի պայմանագրից և այլն: Հայաստանի պատվիրակությունը, անշուշտ, իրավունք չուներ ստորագրել այդ անբարոյական, հայ ժողովրդի, տվյալ դեպքում Ալեքսանդրապոլի գավառի համար ողբերգական հետևանքներ ունեցող պայմանագիրը:

Թուրք դահիճները, ներխուժելով հայկական տարածքները, հայտարարում էին, թե իրենք կոմունիստ-հեղափոխականներ են, Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցը, Անտանտի հակառակորդը, Արևելքում հեղափոխական պայքարի առաջապահը և եկել են հայերին ազատելու դաշնակցականների իշխանությունից: Այդ օրերին, փաստորեն, գավառի իշխանությունները լքել էին իրենց պաշտոնները, բնակչությանը թողել բախտի քմահաճույքին և հայկական բանակի հետ հեռացել: Ստեղծվել էր քաոս, որից օգտվեցին քեմալական դահիճները և գավառի իշխանությունը կենտրոնացնելով իրենց ձեռքում՝ ազատություն տվեցին իրենց վայրագություններին: Օկուպացված գավառի բնակչությունը սարսափի մեջ էր, մահի ճիրաններում: Երբ թուրքական բանակը մտնում է քաղաք, բան-

[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 65, թ. 17:
[3] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 679, թ. 3-5:

տում էին գտնվում դաշնակցական կառավարության կողմից կալանավորված մի խումբ կոմունիստներ: Նրանք, ազատվելով բանտից, որոշում են «Ալեքսանդրապոլում ստեղծել իշխանություն հենց տաճիկների կողքին՝ երևի չհասկանալով, թե ովքեր են տաճիկները, նույնիսկ ամենապատասխանատու ընկերները նրանց անվանում էին քեմալական կարմիր բանակ: Եվ հրավիրված ժողովում որոշվում է իշխանությունը վերցնել իրենց ձեռքը»: Թ. Մանդալյանը դեմ էր այդ որոշմանը: Սակայն «ժողովի փոքրամասնության կողմից ընտրվում է հեղկոմ...»[4]: Վ. Մինախորյանի հաղորդման համաձայն, երբ դաշնակցական կառավարության պատվիրակությունը հասել է Ալեքսանդրապոլ, արդեն «քաղաքում իշխանությունն անցել» էր «մեծամասնականներին և միտինգներ» էին «լինում կառավարության ու դաշնակցության դեմ»: Հաստատված էր «հեղկոմը, միլիցիան և քաղաքային իշխանությունները նրանց ձեռքում»էին և «ամեն մի տասը միլիցիային կից մի տաճկական ասկյար կար»: Այդ ձևով «քաղաքը բաժանված էր 10 մասի...»[5]: 1921 թ. հունվարի 3-ին Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում կազմված մի զեկուցագրում ասված է, որ երբ 1920 թ. նոյեմբերի 5-ին դաշնակցական բանակը հեռանում է Ալեքսանդրապոլից, կոմունիստները, դուրս գալով բանտից, որոշում են մնալ քաղաքում և «հնարավորին սահմաններում օգնության հասնել ոչնչացվող ժողովրդին»: Նաև նշվում է, որ 6 ամիս շարունակ կտրված լինելով դրսի աշխարհից, Ալեքսանդրապոլի ընկերները չէին իմանում, թե ովքեր են թուրքերը, ինչ պատճառներ և նպատակներ են նրանց բերել այստեղ, կամ որքանով են ճիշտ դաշնակիցների տարածած այն լուրերը, թե հարձակվող Քյազիմ Կարաբեքիրի բանակը բոլշևիկներինն է: Այդ ժամանակ Ալեքսանդրապոլի կոմունիստները մտածում էին, որ եթե այդ բանակը բոլշևիկյան չէ, ապա ծայրահեղ դեպքում հեղափոխական է, և ուղարկում են խաղաղ պատվիրակություն նրան դի-մավորելու համար[6]: Եվ երբ նոյեմբերի 7-ին թուրքերը մտնում են Ալեքսանդրապոլ, նրանց հրամկազմը և ասկյարները քաղաքում տեղի ունեցած հանրահավաքում հայտարարում են, թե իրենք սվիններով հայերին ազատություն են բերել «դաշնակցականների լծից»: Այդ ժամանակ թուրքերի հետ բոլոր բանակցությունները վարում էր կոմկուսի օկրուգային կոմիտեն[7]:

Մի այլ փաստաթղթում նշված է, որ բանակցությունների ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը և թուրքական հրամանատարությունը պայմանավորվել էին, որ թուրքերը զբաղեցնեն միայն Ալեքսանդրապոլի բերդը և կայարանը: Պետք է քաղաքը մնար առանց բռնազավթման, ապահովվեին բնակչության անձեռնմխելիությունը և գույքի պահպանությունը, հաստատվեր կարգ ու կանոն: Հայկական բանակը Ալեքսանդրապոլից պետք է հեռանար մինչև 15 կմ: Ըստ պայմանավորվածության՝ նոյեմբերի 7-ին, երեկոյան, թուրքերը զբաղեցրել էին կայարանն ու բերդը: Թուրք զավթիչները, խախտելով պայմանավորվածու-

[4] Նույն տեղում, ֆ. 3, ց. 1, գ. 3, թ. 12:
[5] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 639, թ. 3:
[6] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 10, թ. 1:
[7] Նույն տեղում:

թյունը, այդ նույն գիշերը հարձակվում են կայարանամերձ բնակարանների վրա: Պարզ դարձավ, որ քաղաքը հանձնվել էր «ավազակների քմահաճույքին»: Թալանը շարունակվեց նաև ցերեկը: Թուրքերը քաղաքի վարչությունից պահանջում էին հաց, գարի, ալյուր, աղ, օճառ և այլ ապրանքներ:Մինչդեռ հասարակական պահեստները դաշնակների հեռանալուց հետո լրիվ դատարկ էին: Քաղաքում կային նաև տասնյակ հազարավոր փախստականներ, որոնք սովի էին մատնված: Մինչդեռ թուրքերից յուրաքանչյուրը գալիս, քաղաքի ինքնավարությունից պահանջում էր լավ սենյակ ու թանկարժեք իրեր:Նոյեմբերի 13-ին քաղաքում տեղի ունեցավ հանրահավաք՝ թուրք կոմկուսի ներկայացուցչի մասնակցությամբ: Որոշվեց «քաղաքը փրկելու համար հայտարարել խորհրդային իշխանություն»:Նոյեմբերի 17-ին «Մարսելյեզի» հնչյունների տակ հայտարարվեց խորհրդային իշխանություն՝ իբրև դրանով պետք է վերջ տրվեր թուրքերի գազանություններին: Սակայն հետագա իրադարձությունները «բերեցին զրկանքների անասելի դառնություններ»:Թուրքական հրամանատարությունը քաղաքի իշխանությունից պահանջում էր հարյուրավոր մարդիկ, որոնց ուղարկում էին Սարիղամիշ, Էրզրում, Կարս՝ տաժանակիր աշխատանքներ կատարելու համար: Տրվել էր գաղտնի հրաման՝ որսալ հայերին ինչ գնով էլ լինի: Ամեն օր լաց ու աղաղակ էր լսվում: Թուրքերի հեռանալուց հետո միայն գտնվել են անհետ կորածների դիակները նկուղներում, այգիներում, դաշտերում: Թուրքերն իրենց ձեռքն էին վերցրել հեռախոսակապը, հեռագրատունը և քաղաքը լրիվ մեկուսացրել արտաքին աշխարհից: «Անգամ տրանսպորտը չէր հերիքում դիակները տեղափոխելու համար: Ցուրտն ու սովը հազարավոր մարդկանց հնձում էին: Կոմունիստները բացահայտ հանդես էին գալիս վերջնագրով: Թուրքերը դա ընդունում էին զայրույթով: Նրանք ձգտում էին ընդհարում առաջ բերել կոմունիստների և բնակչության միջև»[8]:

Քաղաք և գավառ ներխուժելուց հետո թուրքերը խորամանկելով գործում էին կիսագաղտնի:Նոյեմբերի 13-ին հրավիրված հանրահավաքի անունից ողջույնի հեռագիր է ուղարկվում Թուրքիայի կոմունիստական կուսակցությանը: Թուրքերը, համաձայն իրենց վարած քաղաքականության, հենց առաջին օրերին ձերբակալում են մի խումբ հայ տղամարդկանց, որոնք ազատվում են քաղաքի բոլշևիկների միջամտությամբ:Վերոնշյալ՝ Ալեքսանդրապոլի քաղաքային առաջին կոնֆերանսի նյութերից պարզ երևում է, որ բոլշևիկները «կառավարությունը վերցրել» էին «այն ժամանակ, երբ քաղաքում տաճիկները սկսել էին իրենց բարբարոսությունները»:Ապա քաղաքում ստեղծվել է հեղկոմ: Շրջանային կոմիտեն ուներ լայն լիազորություն:Նախքան Ալեքսանդրապոլում խորհրդրդային իշխանության հաստատումը, տեղի ունեցած շրջանային կոմիտեի նիստում որոշվել է քաղաքում հաստատել խորհրդային իշխանություն, քանի որ«միայն այդ միջոցով է հնարավոր վերացնելու այն բոլոր բարբարոսությունները, որոնք կատարվում էին տաճիկների կողմից»:Այդ նիստում «ընտրվում են հեղկոմի անդամներ, և 1920 թ. նոյեմբերի 17-ին Ալեքսանդրապոլը հայտարարվում է խորհրդային:Այդ ժամանակ այստեղի հեղկոմը կոչվում էր ոչ թե Ալեքսանդրապոլի, այլ Հայաս-

[8] Նույն տեղում, ֆ. 144, ց. 3, գ. 45, թ. 5-7:

տանի»[9]: Իբր, այդ անունը տրվել էր թուրքերի առաջարկությամբ, որպեսզի իրենց իշխանությունը տարածեն ողջ Հայաստանի վրա: Իսկ հետո, երբ Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, թուրքերը «Ալեքսանդրապոլի հեղկոմը հակադրեցին Հայհեղկոմին»[10]: Այսպիսով, Ալեքսանդրապոլի գավառում հայտարարվում են խորհրդային կարգեր, ստեղծվում է հեղկոմ, որի նախագահ և ներքին գործերի կոմիսար է նշանակվում Մաթևոս Տեր-Գրիգորյանը (Արծվիկ), նրա օգնական՝ Ներսիկ Ստեփանյանը, ֆինանսների կոմիսար՝ Արտաշես Տեր-Մարտիրոսյանը, լուսավորության կոմիսար՝ Նուշիկ Զախարյանը և այլն: Որ Ալեքսանդրապոլի հեղկոմը միայն քող էր տաճիկ դահիճների համար՝ իրենց քաղաքականությունն իրագործելու նպատակով, ոչ մի կասկած չկա, և դա երևում է թեկուզ նրանից, որ հեղկոմի բաժինների մեծամասնությունը գոյություն ուներ միայն թղթի վրա: Գործում էին միայն այն մարմինները, որոնց օգնությամբ թուրքերը բացահայտորեն թալանում էին բնակչությանը և ահաբեկչություն իրագործում: Թե քաղաքում և թե գավառի գյուղական վայրերում ստեղծված իշխանության մարմիններում ընտրվում էին թուրքերի հավանությանն արժանացած անձնավորություններ:

Հայհեղկոմը, ըստ Ն. Ստեփանյանի բացատրության, անցնելով գործի, տեսնում է միայն թալանված պահեստներ, ավերակներ, կուտակված գաղթականներ: Հեղկոմը փորձում է միջոցառումներ ձեռնարկել՝ դադարեցնելու տաճիկների բարբարոսությունները և ժողովրդին ազատելու այդ անտանելի ու դառն վիճակից: Ն. Ստեփանյանի խոստովանությամբ, «հեղկոմի ջանքերը և դիմումները տաճիկ հրամանատարությանը, մնում են անհետևանք»: Այսպես, թուրք հրամանատարությունը Արփաչայի մոտերքում գտնված մի ասկյարի դիակի համար պահանջում է տասը պատանդ: Տրված երեք օր ժամանակը դեռ չլրացած, թուրքերը տասը հայ միլիցիոներների բանտարկում են բերդում, որոնցից մեկը սոսկալի տանջանքներից մահանում է, իսկ ինը ազատվում են Ռուսաստանի ներկայացուցիչ Մդիվանու միջնորդությամբ: Թուրքական հրամանատարությունը հեղկոմից պահանջում էր երեք օրում հավաքել 10000-ից ավելի զենք և հանձնել իրեն, չկատարելու դեպքում ասկյարները կանցկացնեն խուզարկություն, որի հետևանքը ահավոր կլինի: «Պարզապես,- եզրափակում է Ն. Ստեփանյանը,- հեղկոմը գտնվում է տաճիկների բռունցքներում»[11]:

Թուրք դահիճների բարբարոսությունները բացահայտ էին մանավանդ գավառի գյուղերում: Արխիվային նյութերում այդ փաստը հաստատող բազմաթիվ տվյալներ կան: Զաջուռի շրջանից հազարավոր մարդկանց և գրեթե բոլոր անասուններին քշել էին Թուրքիա: Ալեքսանդրապոլի կայարանում աշխատելու համար հավաքագրված մարդկանց տանում էին Ղարս և Էրզրում, որտեղ նրանց «մերկ, ոտաբոբիկ ստիպում էին աշխատել օրական 14-15 ժամ՝ նրանց տալով միայն մեկ ֆունտ հաց: Այստեղ են ուղարկվում քաղաքի համարյա բոլոր մասնագետները»: Արդեն այդ ժամանակ բացահայտվել է բնակչության «նկատմամբ թուրքերի ունեցած

---

[9] Նույն տեղում, ֆ. 3, ց. 1, գ. 3, թ. 9:

[10] **Ալեքսանյան Ս.,** Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Ե., 1964, էջ 345:

[11] ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 3, թ. 9:

վերաբերմունքը»[12]: Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը դեկտեմբերի 7-ին Չիչերինին ուղարկած հեռագրում հաղորդել է. «Ստույգ տեղեկությունների համաձայն, որը հաստատում է նաև Մդիվանին, թուրքերը գրավում են սննդամթերքի պահեստները, մանկատների սննդամթերքը, քշում Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիների ամբողջ անասունը, բացեիբաց հայտարարում են, որ Ալեքսանդրապոլը կթողնեն միայն այն բանից հետո, երբ այստեղից Հայաստանի ողջ գույքը ամբողջովին դուրս կտանեն»[13]: Թուրք բարբարոսների այդ քայլերը հեղինակազրկում էին հանրապետությունում իշխանության եկած Հայկոմկուսին և Հայհեղկոմին: Հայկոմկուսի Ալեքսանդրապոլի կազմակերպությունը ստիպված էր հարց դնել հանրապետության իշխանությունների առաջ Ալեքսանդրապոլի խորհրդային իշխանության վերացման մասին: Անկասկած՝ Երևանում համաձայնվում են լուծարել Ալեքսանդրապոլի հեղկոմը, սակայն պահը համարում են անբարենպաստ: Մինչդեռ Ալեքսանդրապոլի կոմունիստների և հեղկոմի աչքերի առաջ շարունակվում էին թալանը և կոտորածը: Երեք ամսում տարել էին 300 000 խոշոր և մանր եղջերավոր անասուն, գերեվարել 10 հազար մարդ: Գյուղերից հավաքում էին մարդկանց, կենտրոնացնում Փոքր Ղարաքիլիսայում, որտեղ նրանց ենթարկում էին դաժան ճնշումների: Սպանությունները մեծ մասամբ կատարում էին գիշերը և դիակները նետում Արփաչայ: Կանանց անպատվում էին և գլխատում: Այս փաստերը ներկայացնելով Խորհրդային Հայաստանի իշխանություններին՝ Ալեքսանդրապոլի քաղկոմը պահանջում էր հետ կանչել Ալեքսանդրապոլի խորհրդային իշխանությունը[14]:

1921 թ. հունվարի 31-ին կազմված մի փաստաթղթի համաձայն, թուրքերը Ալեքսանդրապոլում ունեին 700 ասկյար, որոնք տեղավորված էին բերդում և կայարանում: Թուրքական բանակում կային շատ ասկյարներ նաև տեղի թուրքերից: Ալեքսանդրապոլում ցորենի, ալյուրի, ծխախոտի ամբողջ առևտուրը գտնվում էր թուրք ասկյարների ձեռքում, որոնք այդ ապրանքները թալանում էին հայ ընտանիքներից: Թուրքական բանակում «այլասերումը մեծ չափեր» էր ընդունել[15]: Թուրքերն ամենուր իրենց պահում էին անասելիորեն սանձարձակ: Ժամանակակիցը վկայում է, որ Խոտայ Խարաբա, Դարակեյ,Կոր-Աղբյուր, Կոյակուլի-Ղազանչի և Շիշթափա հայկական գյուղերում կանայք և աղջիկները ենթարկվել են բռնարարքների, նրանց մի մասին առևանգել են տաճիկները, իսկ մի մասին էլ՝ հարևան Աղաբաբայ գյուղի թուրքերը: Այդ գյուղերում պատկերը շատ ծանր էր. ամեն ինչ կամ ավերված էր, կամ էլ վառված, ամենուր ընկած էին տասնյակ դիակներ, պատահում էին նաև կիսամեռ և սովահար եղած երեխաներ ու ծերեր[16]:

Հայաստանի կոմկուսի Ալեքսանդրապոլի կոմիտեն 1920թ. դեկտեմբերի 21-ին Հայկոմկուսի կենտկոմին և Հայհեղկոմին ուղղած նամակում պահանջում էր խիստմիջոցառումներ ձեռնարկել այդ այլանդակություն-

---

[12] Նույն տեղում, թ. 3:
[13] Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 50, թ. 1:
[14] Նույն տեղում, թ. 4:
[15] Նույն տեղում, թ. 9-11:
[16] Նույն տեղում, թ. 18:

ները իրագործողների դեմ[17]: Ալեքսանդրապոլի գավառում ստեղծված այդ ահավոր վիճակի մասին խոսվում է նաև 1921 թ. հունվարի վերջին կամ փետրվարի սկզբին Երևանից Բաքու ուղարկված մի հեռագրում, որտեղ ասված է, որ անասուններին քշելուց բացի, թալանել են ամբողջ սննդամթերքը և գույքը՝ գրասեղաններ և աթոռներ, գրենական պիտույքներ, անգամ ջեռուցման վառարաններ, փայտի կտորները: Իսկ բնակչությունը սոված է, մերկ և կիսամեռ: Սանձազերծ թուրքերն իրագործում են ձերբակալություններ, գիշերները տանում են տնից, գնդակահարում, բանվորներին քշում Էրզրում, կանանց բռնաբարում և նետում ջրհորները, պահանջում են զենք, հակառակ դեպքում սպառնում ամբողջ շրջանի բնակչությանը տեղահան անել: Նրանք չեն հավատում հեղկոմին, որոնց անվանում են դիմակավորված դաշնակցականներ[18]: Ալեքսանդրապոլի՝ երկրորդ տեղամասի կոմիսարը 1921 թ. հունվարի 6-ին հաղորդել է, թե իրեն վստահված տեղամասի բոլոր շրջաններում թալանից և հափշտակումներից հետո մնացել էին միայն երեք գյուղ՝ Քավթառլուն, Ղազանչին և Բեկանդը, որոնցում դեռևս կարելի է տեսնել մի քանի գլուխ խոշոր եղջերավոր անասուն և քիչ քանակությամբ հացահատիկ. թուրքերը մտադրվել են դրանք ևս հափշտակել: Այդ գյուղերից հավաքել էին «բայրա» կոչված հարկը: Հիմա պահանջում են նոր «բայրա»: Այդ գյուղերի բնակիչները ստիպված են եղել անցնել չեզոք գոտի, որպեսզի փրկեն գեթ իրենց կյանքը[19]:

Ալեքսանդրապոլի հեղկոմը 1920 թ. դեկտեմբերի 25-ին Հայհեղկոմին ուղարկած զեկուցագրում, որի տակ ստորագրել էր հեղկոմի անդամ Ն. Զավարյանը, ուղղակի գրել է, որ տեղի հեղկոմի իշխանությունը պարզապես պատրանք է, խորհրդային իշխանության ծաղր: Քեմալականները իրենց կատարած հանցագործությունները բարդում են հեղկոմի և կոմունիստների վրա, առիթ են որոնում «մեր դեմ բացահայտ ռեպրեսիա սկսելու: Նրանք մտադիր են մեզ բոլորիս ձերբակալել՝ իբրև թալանչիների, մարդասպանների, հասարակության համար որպես վնասակար տարրերի: Ցանկանում են զցել մեր հեղինակությունն ու համակրանքը»[20]. Այդ զեկուցագրում նաև ասված է, որ թուրքերը քաղաքից տանում են ամեն ինչ՝ շոգեքարշեր, մեքենաներ, գյուղատնտեսական գործիքներ, հեռագրային և հեռախոսային սարքեր, ավտոմեքենաների մասեր, կահույք և այլն: Քշում են ամբողջ անասունը: Բնակչության մի մասը սրախողխող է արվել, մի մասն էլ փախել է: Զեկուցագրի հեղինակը բացատրում է. «Մենք որոշել ենք ժամանակը ձգձգելու համար թուրքական հրամանատարության հետ վարել համաձայնողական քաղաքականություն և շարունակել գործել վճռական»: Ապա Հայհեղկոմին խնդրում է վճռել՝ կարո՞ղ են նման պայմաններում մնալ իշխանության գլուխ: Առաջարկվում է Ալեքսանդրապոլի որբանոցներից 3000 որբ տեղափոխել և տեղավորել Երևանի որբանոցներում[21]: Մի քանի օր անց, դեկտեմբերի

[17] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 19, թ. 4:
[18] Նույն տեղում, գ.27, թ. 31:
[19] Նույն տեղում, թ. 32:
[20] Նույն տեղում, գ. 33, թ. 1:
[21] Նույն տեղում, թ. 10:

29-ին, Ալեքսանդրապոլի հեղկոմից Հայհեղկոմ ուղարկված մի հեռագրում հաղորդվել է, որ թուրքերը առիթ են որոնում ընդհարման: Խնդրվում է պատասխանել՝ ինչպե՞ս վարվել[22]. Թուրքերի բարբարոսությունների և դրանց թողած հետևանքների մասին են խոսում բազմաթիվ փաստեր: Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ Մաթևոս Տեր-Գրիգորյանը 1920 թ. դեկտեմբերի 29-ին Երևանի ներքին գործերի նախարարություն ուղարկած նամակում հաղորդում է, որ գավառում չկան հաց, այլ մթերքներ, վառելափայտ: Փախստականները սովամահ են լինում, տարածվում է տիֆ[23]:

Ալեքսանդրապոլի երկրորդ տեղամասի կոմիսարը 1921 թ. հունվարի 1-ին Հայհեղկոմին հաղորդում է, որ դեկտեմբերի 26-ին Քավթառլու ժամանելով՝ թուրքական 36-րդ որսորդական գնդի ջոկատը պահանջել է տեղավորել ասկյարներին: Աշխատանքն ավարտելուց հետո ինը երիտասարդ կոմունիստներ անհետանում են: Պարզվում է, որ նրանց սպանել են թուրքերը, դիակները սայլով տարել դուրս և թաղել: Հետքը կ որցնելու համար նրանք սպանել են նաև սայլապանին: Ավերածություններից, թալանից ու սպանություններից սարսափահար բնակչությունը փախել է անտառները, ժողովուրդը սովի է մատնվել: Իսկ վերջում դառնությամբ խոստովանում է. «Մենք կատարել ենք խոշոր քաղաքական սխալ՝ կապված մի ամբողջ ազգի ոչնչացման հետ»[24]: Այդ իրադարձություններից ելնելով՝ Ալեքսանդրապոլում ստեղծվում է արտակարգ հանձնաժողով: Այդ օրերին Ալեքսանդրապոլ գործուղված Ամատունին 1921 թ. հունվարի 2-ին հաղորդում է, որ այդ հանձնաժողովը անցել է բոլոր սահմանները՝ գնդակահարություններ, ծեծ, ստորացումներ, բռնագրավումներ և այլ դաժանություններ: Ամատունու առաջարկությամբ, հանձնաժողովը լուծարվում է[25]: Մինչդեռ թուրքերը շարունակում էին ոճրագործությունները: Ալեքսանդրապոլի հեղկոմի անդամ Նահապետյանը 1921 թ. հունվարի 19-ին հաղորդում է, որ քաղաքից և գյուղերից թուրքերը տարել են 14140 մարդ, սպանել 4845-ին, բռնաբարել 2500 կանանց և աղջիկների: Տարել են մոտ 1.5 միլիոն փութ հացահատիկ և ալյուր: Գավառի 75 հազար մարդուց մնացել է 15 հազարը, սպանվել են 22 միլիցիոներ, երկու կոմիսար[26]:

Թուրքերի կատարած բարբարոսությունների մասին 4-րդ գավառամասի հեղկոմի անդամ Վահե Տեր-Գրիգորյանը իր կազմած զեկուցագրում նշել է, որ թուրքերը մինչև 1921 թ. փետրվարի 7-ը գավառամասի 35 գյուղերից տարել են մեկ միլիոն փութ հացահատիկ և մոտ 50000 խոշոր եղջերավոր անասուն: Գերեվարել են գեղեցիկ կանանց, շատերին էլ՝ սպանել, այդ թվում՝ 10 միլիցիոներների: Երկաթուղային կայարանի կոմիսարի՝ 1921 թ. հունվարի 19-ին կազմած զեկուցագրից երևում է, որ

[22] Նույն տեղում, թ. 12:
[23] Նույն տեղում, թ. 17-20:
[24] Նույն տեղում, թ. 26:
[25] Նույն տեղում, թ. 28:
[26] Նույն տեղում, գ. 43, թ. 4:

թուրքերը Ալեքսանդրապոլ մտնելու հենց առաջին օրվանից ամեն ինչ թալանում էին, բանվորներին ստիպում աշխատել կամ էլ քշում էին Ղարս և այլ տեղեր[27]: Քեմալականների կողմից խաբված թուրք կոմունիստները ևս կարծես մտահոգված էին հայերի ծանր վիճակի համար: Այսպես, թուրքական կոմկուսակցության հատուկ կոմիտեի նախագահ Խակկին այդ առթիվ խնդրանքով դիմում է Կարս, թուրքական հեղափոխական բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային. «Հայաստանի պարենային ծանր վիճակը թեթևացնելու ու անբախտ ժողովրդին սովամահությունից փրկելու, հեղափոխության հեղինակությունը բարձրացնելու համար խնդրում եմ Ձեր կարգադրությունն առանց արգելքի Ալեքսանդրապոլով շուտ և ազատ բաց թողնել Ադրբեջանից եկող 35 վագոն հացահատիկը և առաջիկայում նույնպես թույլատրել ազատ անցում նման բեռների»[28]:

1921 թ. հունվարի 20-ին տեղի ունեցած գավկոմի և գավհեղկոմի միացյալ նիստը, հանգամանորեն քննարկելով Ալեքսանդրապոլի գավառում ստեղծված տնտեսական և քաղաքական վիճակը, գտավ, որ այլևս հնարավոր չէ այդպես շարունակել: Այդ նիստում հաղորդվեց, որ Խորհրդային Հայաստանի արտգործնախարար Ա. Բեկզադյանը համաձայն է, որ Ալեքսանդրապոլի հեղկոմը թողնի իշխանությունը: Այդ կարծիքին էին նաև Կավբյուրոն և Հայհեղկոմը: Որոշվում է թողնել իշխանությունը և կազմակերպված հեռանալ[29]: Սակայն բնակչությանը առանց պաշտպանության թողնելու համար առաջարկում են բողոք ներկայացնել թուրքերի սանձարձակությունների դեմ և հարցնել գավառի հիմնարկ-ձեռնարկությունների ու կազմակերպությունների կարծիքը[30]: 1921 թ. հունվարի 25-ին Ալեքսանդրապոլի հեղկոմը Մ. Գրիգորյանի նախագահությամբ, հայտարարում է, որ «տաճկական իշխանությունը հակված է ճանաչելու մեր իշխանությունը այն չափով, ինչ չափով որ նա ոչ թե աշխատավորության իշխանությունն է, այլ օկուպացիոն տաճկական զորահրամանատարության մտադրությունների և հրամանների հլու կամակատարը»[31]: Նկարագրելով թուրքերի կատարած թալանը, բռնարարքներն ու ոճրագործությունները՝ Ալեքսանդրապոլի հեղկոմը ընդունում է, որ չկարողացավ կանխել թուրքերի վայրագությունները, գավառում սփռված մահն ու ավերը և տեղում խորհրդային իշխանության գործունեությունն իմաստազուրկ համարելով՝ որոշում է. «Վերցնել իր վրայից քայքայման ու բնաջնջման պատասխանատվությունը» և հայտարարում «իշխանությունը ցած դնելու մասին»[32]: Հեղկոմի հրաժարականից հետո գավառի եկավարությունը կենտրոնանում է գավկոմի ձեռքում: Փետրվարի 7-ին և 8-ին տեղի ունեցած գավկոմի նիստը քննարկում է տնտեսական և քաղաքական հարցեր: Որոշվում է քաղաքում ստեղծել կուսակցական բջիջներ, որոնք պետք է լայն աշխատանք ծավալեին բնակչության շրջա-

[27] Նույն տեղում, թ. 74:
[28] Նույն տեղում, թ. 3:
[29] Նույն տեղում, ֆ. 3, ց. 1, գ. 7, թ. 1:
[30] Նույն տեղում, թ. 2:
[31] Նույն տեղում, թ. 33:
[32] Նույն տեղում, թ. 34-35:

նում: Փետրվարի 12-ին տեղի ունեցած գավկոմի նիստը, լսելով Թադևոս Մանդալյանի զեկուցումն ընթացիկ պահի մասին, որոշեց օգտագործել բանվորական զանգվածներին՝ գործնական պայքար ծավալելու հակահեղափոխական ուժերի դեմ: Առաջարկվեց կապ հաստատել կենտրոնի հետ, ստեղծել զինվորական ուժ, աշխատել կազմալուծել թուրքական բանակը և նախապատրաստվել գավառը ազատագրելու համար[33]: Փետրվարի 19-20-ը տեղի ունեցած նիստում որոշվեց առաջիկայում հրավիրել քաղաքային կուսակցական կոնֆերանս՝ լուծելու գավառի բնակչության պարենային խնդիրը: Փետրվարի 24-ի նիստում քննարկվեց թուրք պարետի պահանջը՝ նոր հեղկոմ ստեղծել հակահեղափոխության դեմ կռվելու և Երևանի դեմ նախապատրաստվող ապստամբությունը ճնշելու համար: Ահա թե թուրքին ինչի համար էր հարկավոր հեղկոմը:

1921 թ. ապրիլի առաջին կեսին տեղի ունեցավ Ալեքսանդրապոլի քաղաքային կուսակցական կոնֆերանսը: Զեկուցող Մանդալյանը, մերկացնելով թուրք հրամանատարության երկդիմի քաղաքականությունը, նշում է, որ Երևանում ընկել է խորհրդային իշխանությունը, իսկ թուրք հրամանատարությունը ամեն կերպ փորձում է Ալեքսանդրապոլում վերականգնել հեղկոմը և այն օգտագործել սկսված ապստամբությունը ճնշելու համար: Խիստ դժգոհ լինելով հեղկոմը չվերականգնելու դիրքորոշումից՝ թուրքերը մտադիր էին Ալեքսանդրապոլի գավառում ստեղծել ինքնավարություն ու այն հակադրել Խորհրդային Հայաստանին: Սակայն Ալեք-սանդրապոլի կոմունիստները այդ մտադրությունը խափանում են[34]: Ապրիլի 9-ի նիստում Ն. Ստեփանյանը զեկուցում է, որ գավկոմը և գավհեղկոմը, զրկված լինելով նյութական և ֆինանսական միջոցներից, ստիպված էին դիմել բռնագրավումների, և այդ նպատակով արտակարգ հանձնաժողովին կից ստեղծվել է բռնագրավման բաժին: Դրանից օգտվելով՝ թուրքերը իրենց գործած շատ վայրագություններ վերագրում են այդ բաժնին: Եվ չնայած դրան, հեղկոմը և գավկոմը բռնագրավումների քաղաքականությամբ, «հնարավորություն են ունեցել որբերի, գաղթականների և խորհրդային իշխանության ծառայողների գոյությունը որոշ չափով պահպանել»[35]: Թ. Մանդալյանը ապրիլի 11-ի ելույթում նշեց, որ Ալեքսանդրապոլի հեղկոմի ամենամեծ սխալը կուսակցական կոմիտեից կտրված լինելն էր, բանվորների և գյուղացիների շահերը մոռացության տալը, թուրքական հրամանատարության հետ ճիշտ քաղաքականություն չվարելը: Առանձնապես կոպիտ սխալներ են թույլ տվել պարենավորման և բռնագրավման բաժինները: Չի գործել սոցիալ-ապահովագրական բաժինը: Հեղկոմի կազմում չի եղել ոչ մի բանվոր և գյուղացի: Հեղկոմը ձևական իշխանություն էր՝ թուրքերի աչքի առաջ: Առանձնապես կոպիտ սխալներ է թույլ տվել արտակարգ հանձնաժողովը: Հակահեղափոխության դեմ կռվելն անհրաժեշտ էր՝ տաճիկներին ցույց տալու համար, որ իրենք «կոմունիստներ» են և ոչ թե «ազգայնականներ»[36]: Կոնֆերանսը եզրակացնում է, որ «Ալեքսանդրապոլը՝ «խորհրդային» կոչված այդ երկ-

[33] Նույն տեղում, ֆ. 3, ց. 1, գ. 7, թ. 7-8:
[34] Նույն տեղում, գ. 3, թ. 4:
[35] Նույն տեղում, թ. 9:
[36] Նույն տեղում, թ. 12:

ամսյա կառավարությունը իր վարած քաղաքականությամբ և գործելակերպով մի սև բիծ դրեց կոմունիստական կուսակցության ճակատին»[37]: Կոնֆերանսը գավառի բնակչության առաջ խնդիր դրեց՝ համախմբվել գավառը թուրք բարբարոսներից ազատագրելու համար: Ստեղծվեց նոր հեղկոմ, որի նախագահ նշանակվեց Լ. Սարգսյանը: Գավկոմի նոր քարտուղար ընտրվեց Գողթունին:

Խորհրդային կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ 1921 թ. ապրիլի 15-ին Անգորայի կառավարությունը Կարաբեքիր փաշային ցուցում տվեց՝ «մեկ շաբաթվա ընթացքում պարպել Ալեքսանդրապոլը», և ապրիլի 23-ին թուրք զավթիչները ի վերջո դուրս քշվեցին Ալեքսանդրապոլից: Ընդհանուր թվով՝ 1920 թ. նոյեմբերից մինչև 1921 թ. ապրիլ գավառի 107 հազար մարդ դարձել է թուրք բարբարոսների զոհ: Գավառի ամբողջ վնասը կազմել է մոտ 20 միլիոն ռուբլի՝ ոսկով: Գավառից Էրզրումի ուղղությամբ հարկադիր աշխատանքի են քշվել մոտ 15 հազար մարդ, որոնց մեծ մասը չի վերադարձել տուն[38]: Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ Սերո Մանուցյանը 1921 թ. օգոստոսի 25-ին Հայհեղկոմին ուղարկած զեկուցագրում հաղորդել է. «Ավերակների կույտերի և քաղցածների մի հսկա զանգված: Գավառի 4 շրջանից երկուսի բնակչությունը բառիս ամենալայն իմաստով խոտ արածելով է ապրել, տնտեսապես ծայրաստիճան քայքայված և աչքերը հառած սպասում էին, թե ի՞նչ կտա իրենց նոր իշխանությունը»[39]:

Այսպիսով, 1920 թ. նոյեմբերին թուրքերի աջակցությամբ ստեղծված Ալեքսանդրապոլի հեղկոմը չկարողացավ կատարել իր պարտականությունները, ուստի նրա գոյությունը ավելորդ էր, մինչդեռ գավառային կուսակցական կոմիտեն թուրքերի տիրապետության օրոք կատարել է որոշակի դրական աշխատանք:

ОБ АЛЕКСАНДРОПОЛЬСКИХ СОБЫТИЯХ

(ноябрь1920 г.- апрель 1921 г.)

АБРАМЯН Г. Б.

Резюме

С ноября 1920 г. по апрель 1921 г. в Александропольской области действовали ревком и областной партком, сформированные до советизации Армении.

Армянская историография не раз обращалась к рассмотрению деятельности этих органов. Изучение архивных материалов явствует о том, что провозглашение советской власти и образование ревкома было чисто формальным, однако формирование областного парткома было оправданным шагом, ибо турецкие оккупанты использовали ревком для своих насильственных действий.

[37] Նույն տեղում, թ. 15:
[38] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 43, թ. 1-2:
[39] Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 114, թ. 30-31: